

Յ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ**

Փոխակերպական քերականությունը, իբրև արդեն ձևավորված տեսություն, առաջնորդվում է այն դրույթով, թե բոլոր քերականական կառույցները, որոնք կառավարվում են այդ լեզվով խոսողների կողմից, սերում են տվյալ լեզվի համար ամենապարզ կառույցներից: Հստ որում, արդեն ապացուցված է, որ քերականական կառույցի պարզությունը հակադարձ համեմատական է այդ կառույցի՝ տվյալ լեզվին հատուկ լինելուն: Այսինքն՝ որքան պարզ է կառույցը, այնքան նա ընդհանուր է և հատուկ չէ որևէ կոնկրետ լեզվի, և որքան ծավալվում է այդ պարզ կառույցը, այնքան նա դառնում է այս կամ այն լեզվին հատուկ: Այսպես՝ Հարրիսը անգլերենի համար առանձնացրել է միջուկային յոթ կառույց՝ 1) *NvV*, 2) *NvVPN*, 3) *NvVN*, 4) *NisA*, 5) *NisPN*, 6) *NisD*, 7) *NisN*, ուր՝ *N*—գոյական, *V*—բայ, *A*—ածական, *P*—նախդիր, *D*—մակբայ, *v*—օժանդակ բայ: Հատկանշական է, որ ուսաց լեզվի համար ևս ընդունվում են միջուկային կառույցների վերոբերյալ կաղապարները, իսկ գերմանացի լեզվաբան Հելբիգը ուղղակի նշում է, որ գերմաներենում ևս այդ կառույցները միջուկային են¹: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիշյալ կառույցները շնչին տարբերություններով կարելի է միջուկային համարել նաև ժամանակակից հայերենի համար:

Փոխակերպական քերականության նպատակն է վեր հանել այն օրինաչափությունները, որոնք ընկած են շարահյուսական կառույց-

¹ *И. Хельбиг, Учение Харриса и Хомского о трансформации в языке. «Иностран. языки в школе», 1966, № 5.*

ների սերման հիմքում: Փոխակերպման, իբրև լեզվաբանական նոր հայեցակետի, երևան գալիս սերտորեն կապված է լեզվի նկատմամբ ունեցած նոր մոտեցման հետ, որի դեպքում ուշադրության կենտրոնում է լեզվի նկարագրությունը համադրության նպատակներով: Իր առջե գրված այս խնդիրը լուծելու համար սերող քերականությունը շարահյուսական կառույցների բազմությունից վեր է հանում այն կառույցներ, որոնք ընկած են դրանց հիմքում: Այստեղ է, որ փոխակերպական քերականությունը տարբերում է, այսպես կոչված, շարահյուսական և ելակետային կառույցներ հասկացությունները, առաջինի տակ դնելով այն բազմաթիվ կառույցներ, որ կարող է կազմել տվյալ լեզվով խոսողներից յուրաքանչյուրը, իսկ երկրորդի տակ՝ այսպես կոչված միջուկային կառույցները: Հենց «ելակետային կառույցներ» տերմինը մատնացույց է անում, որ փոխակերպական վերլուծության դեպքում առաջին փուլը պետք է լինի շարահյուսական կառույցների հիմքում ընկած ելակետային կառույցների վերահանումը:

Այսպիսով, փոխակերպական վերլուծության դեպքում որոշակիորեն ընդգծվում է և՛ երկու կողմ՝ մեկը, եթե կարելի է ադպտել կոչել, ճանաչողական կողմն է, որի դեպքում բազմաթիվ շարահյուսական կառույցներ տարբեր փոխակերպումների օգնությամբ հանգեցվում են ելակետային կառույցների: Մյուսը, որ ընթանում է, կարծես, հակառակ ուղղությամբ, ցույց է տալիս, թե ինչպես այդ կառույցներից (միջուկային, ելակետային միավորներ) սերման օրենքներով կարելի է ստանալ այս կամ այն քերականական կառույցը: Այլ կերպ ախ երկրորդ մասը կոչվում է նաև համադրություն (սինթեզ): Համադրությունը, որի դեպքում տեղի է ունենում կառույցների սերում, կարելի է ներկայացնել իբրև հոգեբանա-ֆիզիոլոգիական պրոցես, այսինքն՝ որոշակի հոգեբանա-ֆիզիոլոգիական մեխանիզմի աշխատանքի արդյունք, երբ մարդկային երկարատև հիշողության² մեջ պահպանված ելակետային միավորները ձևափոխվում են՝ դառնալով շարահյուսական կառույցներ: Այս դեպքում լեզուն դիտվում է իբրև մի մեխանիզմ, որը որոշակի կանոններով սահմանափակ

² Երկարատև հիշողության մասին տես փորձառական հոգեբանության տվյալները, ըստ որի մարդկային արագընթաց հիշողության մեջ կարող է պահպանվել միաժամանակ 7 ± 2 միավոր: Այս տվյալների վրա է հիմնվել ամերիկացի լեզվաբան Վ. Ինգլեն նախադասության խորության մասին հիպոթեզը առաջ քաշելիս: Այս հիպոթեզը հայերենի նկատմամբ կիրառել է է. Միրաքյանը: Э. Б. Миракян, Испытание гипотезы В. Инглена на материале армянского языка, Ереван, 1968).

թվով տարրերից կառուցում է (կազմում) անսահմանափակ թվով նախադասություններ և ապա տեքստեր: Սակայն անմիջապես պետք է նշել, որ խոսողի հոգեբանությունը չափից ավելի տարվելը կարող է հանգեցնել ծայրահեղության, դուրս բերելով համադրությունը (սերող քերականությունը) լեզվաբանի իրավասության սահմաններից: Այս դեպքում չափի պահպանումը խիստ անհրաժեշտ է, քանի որ ադր մեխանիզմի վկայակոչումը գլխավորապես պետք է ըմբռնվի խորև միայն ելակետային դրույթ:

Փոխակերպական քերականության (ՓՔ) մուտքը լեզվաբանության մեջ բավականին նշանակալից եղավ: Նախապես հանդես դալով իբրև ըստ անմիջական բաղադրիչների (ԱԲ) վերլուծության լրբացնող, պարզաբանող գործառությունների մի ամբողջություն, ՓՔ ծավալվեց, դառնալով մի լայն, ինքնուրույն ուղղություն, որը արդեն ինքն էր իր մեջ ներառել ըստ ԱԲ վերլուծությունը: ՓՔ այսպիսի լայն տարածմանը նպաստող մի շարք հանգամանքներ կան, որոնցից, սակայն, ամենակարևորն այն է, որ երկար ընդմիջումից հետո ՓՔ կառուցվածքային լեզվաբանությանը թույլ էր տալիս անդրադառնալ լեզվի իմաստային կողմին: Սա շատ ժամանակին էր և հարմար, քանի որ լեզվաբանների ճեղղ մեծամասնությունը աշխարհի բոլոր ծայրերում այլևս չէր կարող մնալ խիստ ֆորմալիզմի սահմաններում, և հաա այստեղից էլ սերող քերականության շտեսնված տարածվածությունը: Հնարավորություն ստեղծվեց բազմազան հետաքրքիր միջոցներով անդրադառնալու լեզվի իմաստային կողմին: Այսպես՝ փոխակերպման բնորոշ առանձնահատկություններից մեկն է համարվում ելակետային միավորի և նրանից ստացված նոր միավորների իմաստային ընդհանրությունը: Առաջադրված խնդիրը լուծելու համար վերլուծության ժամանակ պահպանվում են հիմնական ձևությունները, իսկ երկրորդական (գլխավորապես բառահարաբերական) ձևությունները փոխակերպվում են: Այսպես, օրինակ, եթե հայերենի հետևյալ կառույցի համար կատարենք ներգործական-կրավորական փոխակերպումը՝ Փ:Ն→ Կ եղյամը ծածկեց կտուրները, → Կըտուրները ծածկվեցին եղյամով, ապա դժվար չէ նկատել, որ ամբողջովին պահպանված է ելակետային կառույցի և նրանից սերված կառույցի իմաստային ընդհանրությունը: Տվյալ դեպքում փոխակերպումը արտահայտվել է այն բանում, որ սերված կառույցը ենթարկվել է տվյալ կրավորական նախադասությանը հատուկ հետևյալ փոփոխություններին, որ կարելի է ներկայացնել հրահանգների ձևով:

1. Բայ-ստորոգյալը կրավորական տեսքի բերել (Նղյամը ծածկրվեց կտուրները):

2. Միջուկային ենթակային տալ գործիականի տեսք (Նղյամով ծածկվեց կտուրները):

3. Ենթական և խնդիրը դասավորել կրավորականին համապատասխան (Կտուրները ծածկվեց Նղյամով):

4. Ստացված կառույցում ստորոգյալը թվով համաձայնեցնել ենթակային (Կտուրները ծածկվեցին Նղյամով):

Զորորդ հրահանգը ֆակուլտատիվ է, այսինքն՝ ոչ պարտադիր, և կախված է այն բանից, թե ելակետային կառույցում խնդիրը ինչ թվով է դրված, և քանի որ առաջին երեք հրահանգները գործում են նման փոխակերպմաների դեպքում, ուստի շրջորդը կգործի միայն այն դեպքերում, երբ փոխակերպվող կառույցի խնդիրը գրված է հոգնակի թվով, որը նման փոխակերպման ժամանակ իր հետ բերում է շրջորդ հրահանգի անհրաժեշտություն:

Սեր լեզվին խիստ հատուկ այս փոխակերպման հրահանգների ետեառաջումյանը անդրադառնալիս նկատում ենք, որ դրանք միշտ չէ, որ ուղղագիծ լուծում են ստանում: Առանձնապես հետաքրքրական է առաջին և երկրորդ հրահանգների ետեառաջությունը: Այս խնդիրը լուծելու համար դիմեցինք ինֆորմանտների օգնությանը³: Ընտրվեցին 10 հոգի, որոնցից վեցը առանց կասկածելու գտան, որ վերլուծելով փոխակերպման դեպքում առաջինը պետք է կատարվի թեթյա-ստորոգյալը կրավորական տեսքի բերելը՝ հրահանգը և այնուհետև՝ ինչպես որ տեքստում է: Ինֆորմանտներից երկուսը, այնուամենայնիվ, գտան, որ առաջին հերթին պետք է կատարվի երկրորդ հրահանգը և ապա առաջինը, իսկ երկուսը երկմտում էին՝ դժվարանալով առաջնություն տալ այդ հրահանգներից որևէ մեկին:

Փոխակերպական քերականության մեջ որոշակիորեն տարբերակում են վերլուծությունն ու համադրությունը: Եվ դեռևս ոչ մի հետադոտող կասկած չի հայտնել այն մասին, որ այդ երկուսը կապված են միմյանց հետ և գտնվում են փոխադարձ պայմանավորվածության մեջ: Այդ փոխադարձ կապը պետք է հաշվի առնվի հաղորդակցման յուրաքանչյուր ակտը նկարագրելիս, երբ մի կողմից համադրություն է կատարվում, մյուս կողմից այն վերլուծվում:

Ավելին. վերլուծության արդյունքները կարելի է հաջողությամբ

3 Մեր կողմից ընտրված ինֆորմանտների մեծամասնությունը բանասիրական պատրաստություն ունի:

ստուգել համադրության միջոցով, և ընդհանրապես Այս սերտ փոխկապակցությունը թերևս արդյունք է այն բանի, որ երկու հայեցակետերն էլ ի վերջո գործ ունեն միևնույն միավորների՝ ախպես կոչված միջուկային կառույցների հետ⁴:

Մեր կարծիքով, «միջուկային կառույց» հասկացության սահմանները վերլուծության և համադրության դեպքում, այնուամենայնիվ, խախտվում են, քանի որ, եթե վերլուծության դեպքում դրանք այն սահմանային միավորներն են, որոնք այլևս բաժանել չի կարելի առանց իմաստը խախտելու, ապա համադրության ժամանակ «միջուկային կառույցները» այն ամբողջությունն են, որոնք անպայման պետք է հնարավորություն ընձեռեն ավելի մեծ կառույցներ սերելու համար: Ուրեմն համադրության ժամանակ երբեմն «միջուկային կառույցը» ինչ-ինչ հատկանիշներով չի համընկնում նույն հասկացության հետ վերլուծության ժամանակ: Եվ եթե վերլուծության ժամանակ միջուկային կառույցները սահմանային միավորներ են, այն վերջնական նպատակը, որին ձգտում է փոխակերպական վերլուծությունը, ապա համադրության դեպքում միջուկային միավորները ելակետ են, որից սկսում է ավելի մեծ միավորների սերումը: Խոմսկին փոխակերպական քերականության հիմնական նպատակն է համարում սերող քերականության այն կանոնները, որոնք ծառայում են որոշակի կառույցներից մյուս քոլտր ավելի բարդ կառույցները սերելուն:

Ընդունված է նաև փոխակերպական վերլուծությունը և համադրությունը համապատասխանաբար կոչել ընկալողի և խոսողի քերականություն, ելնելով այն հանգամանքից, որ խոսողի մոտ համադրություն է կատարվում որոշակի կանոններով եղած պարզ միավորներից բարդերը սերելու համար, մինչդեռ ընկալողի մոտ ասվածը ըմբռնելու նպատակով դրանք վերլուծվում են: Մեր աշխատանքի հիմնական նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի միջուկային կառույցների հետագա ծավալումը ավելի բարդ կառույցների սերման նպատակով, ուստի հետագա շարադրանքում ավելի կժանդանանք համադրության և միջուկային միավորների հետ կապված հարցերին և վերջապես կաշխատենք կոնկրետ օրինակներով ներկայացնել սերումը ժամանակակից հայերենի համար: Ինչպես ասվեց, համադրությունը կամ սերումը խոսողի քերա-

⁴ Մասնագիտական գրականության մեջ սրանք կոչում են նաև «բազիսային» միավորներ կամ կառույցներ:

կանությունն է: Հարկ է նշել, որ նման մոտեցման դեպքում հետազոտողը ավելի դործուն վիճակում է ուսումնասիրվող լեզվի նկատմամբ, հնարավորություն է ստանում եզրակացությունները ստուգել համադրության միջոցով և վեր հանել լեզվի մինչ այդ չհայտնաբերված որոշ առանձնահատկություններ: Փոխակերպումը ներկայացնելիս կարելի է հիմք ընդունել Լ. Ս. Բարխուդարովի հետևյալ դատողությունները. ըստ էության փոխակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ բաղադրյալության մասին տեսությունը, որը մինչ այս բացառապես տարածվում էր լեզվի ձևաբանական մակարդակի վրա: Ինչպես այս մակարդակում տարբերակվում են պարզ և բաղադրյալ բառեր, այնպես էլ շարահյուսության մեջ փոխակերպումը ենթադրում է այդ մակարդակում միջուկային կառույցներ, այսինքն՝ այնպիսի նախադասություններ, որոնք չի կարելի ստանալ ավելի պարզ կառույցներից: Մյուս կողմից՝ այնպիսի փոխակերպումներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ստացվում են այդ տարրական կառույցներից, Լ'արխուդարովը տվյալ դեպքում նշում է նաև նշանակիր և ոչ-նշանակիր հակադրության անհրաժեշտությունը, գտնելով, որ իբրև ոչ-նշանակիր պետք է ընդունել միջուկային կառույցները, իսկ իբրև նշանակիր՝ նրա ամեն մի փոխակերպումը:

Միջուկային կառույցների հարցին կամա թե ակամա անդրադառնում են բոլոր հետազոտողները, քանի որ սա այն հիմնադիր հասկացությունն է, առանց որի փոխակերպական մեթոդի գոյությունը անհնար կլինի: Ընդունված է միջուկային նախադասության հետևյալ բնորոշումը՝ երկկազմ, պատմողական, ոչ զգացական, որի ստորոգյալը կրավորական սեռի բառ չէ (կրավորականով կառույցները, թեկուզ երկկազմ, միջուկային չեն, այլ վերջը նշված միջուկայինների փոխակերպն են համարվում):

Եթե միջուկային կառույցները ընդունենք իբրև փոխակերպման զրո աստիճան, ապա համադրության առաջին աստիճանի փոխակերպումը կլինի ամեն մի լրացման ավելացումը: Հայերենի հոլովաձևերի համար առաջին աստիճանի փոխակերպումը սահմանափակում չունի, այսինքն՝ այս դերով կարող են հանդես գալ ժամանակակից հայերենի բոլոր հոլովաձևերը:

Հետազոտման նյութը. Գործիական հոլովով կառույցների փոխակերպումը հետադոտելու համար հայ դասական և ժամանակակից հեղինակներից ընտրել ենք ավելի քան երեք հազար կառույց, որոնք բնորոշվում են նրանով, որ իրենց մեջ ունեն գործիական հոլովով որևէ լրացում: Այնուհետև ըստ անմիջական բաղադրիչների

վերլուծության և փոխակերպական վերլուծության որոշ կանոնների կիրառման ստացել ենք միջուկային կառույց + գործիական լրացում վաղապարը Այսպես՝

1. Երեխան զարմացած և վախով նայում էր շինվելիկի պսպրողուն կոճակներին (ԱՔ)։

Երեխան նայում էր վախով։

2. Բեկը հրամայել էր դիտատել Մխիթարին, բայց մեղիքների պաղատանքներին զիջելով՝ ներել էր (ՍԽ)։

Բեկը ներել էր զիջելով։

Որոշ դեպքերում⁵ միջուկային կառույց + գործիականով լրացում առաջին աստիճանի փոխակերպը ստանալու համար անհրաժեշտ է լինում գործիականով լրացումը ուղեկցել մի այլ լրացմամբ, առանց որի տվյալ փոխակերպը հնարավոր չէ, այսինքն՝ ատորև բերվող առաջին աստիճանի փոխակերպները հնարավոր չի լինի ստանալ։

3. Քաղցր ժպտում էր Մարիան իր նախկին, ինձ այնքան հա-րազատ, ժպտով (ԳՐ)։

ա) Մարիան ժպտում էր նախկին ժպտով։

բ) Մարիան ժպտում էր քաղցր ժպտով։

4. Նա ձեռքի շարժումով պալատի բակի մոտ կանչեց սպասա-վորների պետին (ՍԶ)։

Նա կանչեց ձեռքի շարժումով։

5. Ջարուհին ներս խուժեց պատուհանից, լցրեց սենյակը զը-վարթ ծիծաղով (ԳՄ)։

Ջարուհին լցրեց սենյակը ծիծաղով։

Հարկ է նշել, որ վերջին երեք դեպքերը նախորդ երկուսի համե-մատությամբ բավականին սահմանափակ թվով փաստեր են ընդ-գրկում։

Ստացված միջուկային կառույցները և առաջին աստիճանի փո-խակերպները շատ հաճախ ունեն այնպիսի քերականական իրողու-թյուններ, որոնք տվյալ դեպքում ավելորդային են, ուստի մեր նը-պատակի համար ոչ էական քերականական բոլոր կարգերը վերաց-վում են Այսպես՝ միջուկային կառույց + գործիականով լրացում կա-ռույցը և սրանից կատարվող հետագա հնարավոր սերումը հետազո-տելու համար ստորոգյալի քերականական կարգերից ավելորդային են համարվել թիվը, դեմքը, ժամանակը, Վերևում արդեն նշվել է,

⁵ Դրանց ուսումնասիրությունը տվյալ հոդվածի նպատակներից դուրս է։

որ ֓:ն→ Կ փոխակերպման ժամանակ շորրորդ հրահանգը՝ ստացված կառույցում ստորագյալը թվով համաձայնեցնել ենթակային, ֆակուլտատիվ է: Այսպես՝ եթե ունենք Խեղճ կանայք նույն ախորժակով ուտում էին գետնից հավաքած ուտելիքի մնացորդները նախադասությունը, ապա սրա միջուկային կառույց + գործիականով լրացում կաղապարը հետևյալ տեսքը կունենա՝ Կանայք ուտում էին ախորժակով, իսկ սրա վերը նշված ձևով պարզեցնելուց հետո կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. նա ուտում է (կերավ) ախորժակով:

Նման, ոչ էական կարգերի պարզեցման համար առաջարկվում է հետևյալը: Առաջին աստիճանի բոլոր կառույցները ենթարկվում են հնարավոր ամեն տեսակի փոխակերպման (վերլուծություն), որից հետո ոչ էական են համարվում այն բոլոր քերականական կարգերը, որոնք անփոփոխ են մնում յուրաքանչյուր փոխակերպման (վերլուծություն) ժամանակ և կարող են ազատ կերպով փոխարինվել առանց որևէ ազդեցություն ունենալու փոխակերպների քանակի վրա: Եթե այս ասվածը կիրառելու լինենք վերը բերված օրինակի նկատմամբ, ապա կունենանք՝ Կանայք (ներանք, նա, դու, ես, տղան...) ուտում էին (ուտում են, կերավ, կուտի,...) ախորժակով: Այսպիսով, ոչ էական են համարվում կառույցի աճն բաղադրիչների քերականական կարգերը, որոնք տվյալ դեպքում հետազոտողի ուշադրության կենտրոնում չեն: Մինչդեռ ախորժակով բառաձևին հատուկ կարգերը էական են և սլարդեցման ենթական չեն:

Գործիական հոլովով կառույցների մասին խոսելիս, ինչպես արդեն նշվել է, ընդունում ենք, որ միջուկային կառույցները տրված են, և սկսում ենք առաջին աստիճանի փոխակերպումից՝ Գ¹ Բ¹:

Ելնելով Գ² բնույթից՝ առաջին աստիճանի փոխակերպումները բաժանել ենք խմբերի, որոնց ներսում արդեն կատարվում են ներխմբային փոխակերպումներ⁶:

Առաջին խմբի մեջ մտնում են այնպիսի կառույցներ, որոնք կարելի է բնութագրել հետևյալ շղթայիկով՝ Գ¹ Բ¹ Գ². ուր իբրև Գ¹ կարող է դրվել որևէ անուն խոսքի մաս (գլխավորապես գոյական անուն և դերանուն) իր ուղիղ ձևով, Բ-ի տակ կարելի է ենթադրել

6 Աշխատանքի մեջ ընդունված են հետևյալ նշանները՝ Գ₁, Գ₂, Գ₃, Գ₄, Գ₅ — որևէ հոլովով դրված գոյական (կամ դերանուն), Բ — դիմավոր բայ, Բ₁ — բայի դերբայական ձև, Բ₂ — կրավորական բայ, ... փոխակերպվում է որևէ բանի, ... փոխակերպված է որևէ բանից, *անթույլատրելի փոխակերպում, Փ — փոխակերպում, Ա — առական: Որևէ նշանի վերին աջ անկյունում դրված թվահամարը ցույց է տալիս միևնույն դասին պատկանող անդամների հաջորդականությունը, ... բառի աջ և ձախ սահմանները:

բայի որևէ դիմաւոր ձև բոլոր ժամանակներով, որը համաձայնեց-
ված է ենթակայի հետ թվով և դեմքով, ըստ որում, ինչպես արդեն
նշվել է, Գ¹-ի և բայի թիվը և դեմքը (դերանվան համար) տվյալ
դեպքում էական նշանակութուն չունի: Իբրև Գ² հանդես է դալիս գո-
յական անունը՝ իր աջ կողմում իբրև սահմանային ձևույթ ունենա-
լով **ալ**-ը և **մք**-ն. այսինքն՝ նշանից առաջ ունենք **-ալ և -մք** ձևույթ
ները: Բերենք Գ¹ ԲԳ² կառույցի մի քանի օրինակ.

Կանայք ուտում են ախորժակով:
Նա հիանում է երգով:
Հռետորը խոսում է ոգևորությամբ:
Թշնամին արշավեց արագությամբ:
Նրանք նվագում են վարպետությամբ:
Պապը խոսում է ընդհատումներով:
Վիրաբույժը փաթաթում է խնամքով:
Տղան քայլում է փողոցով:
Ագիտատորը անցավ ձորով:
Ջորականը հարցրեց հանգստությամբ:
Նրանք մոտենում են դժկամությամբ:
Դողը անցավ մարմնով:

Գ¹ ԲԳ² — սա երկրորդ խմբի կառույցները ներկայացնող շղ-
թային է, ուր, հետևելով ԲԳ² կապին, նկատում ենք, որ Գ² պետք է
ուղեկցվի որևէ ալ լրացումով, որպեսզի հնարավորություն ստանա
այս կառույցի ահաւոր լինելու Այսպես՝

Իշխանը կանչեց լուռ ձայնով:
Նա նայում է խաղաղ հայացքով:
Նրանք դնում էին բոբիկ ոտներով:
Տղան մոտեցավ դանդաղ քայլերով:
Ամպերը դողում են մեղմ հոսանքով:
Աղջիկը ժպտաց ամոթխած ժպիտով:
Նրանք գոռում են կիսավայրենի ձայնով:

Երկրորդ խմբի ենթախումբն են կազմում այն կառույցները, ո-
րոնք բնութագրվում են Գ¹ ԲԳ² շղթայիկով: Սա հանդես է գալիս
որևէ դերանվան ուղեկցությամբ.

Ծշմարտությունը խոսում է նրա շրթունքներով:
Ամրոցը երևում էր իր բնակարաններով:
Նա նստեց իմ հրավերով:
Նրանք եկել էին իրենց տիկիներով:

կառույցների հաջորդ խումբը ավելի շատ նախորդի ենթախումբ կարելի է համարել, քանի որ այս դիրքում ևս 9_1^2 -ն բայի հետ ունեցած իր կապի շնորհիվ անպայման որոշակի հոլովով (ուղղական) լրացում է պահանջում: Ըստ որում, այստեղ բավականին զդույշ պետք է լինել՝ սրանք չշփոթելու համար միջուկային կառույց + ուղղականով լրացում + գործիականով լրացում երկրորդ աստիճանի փոխակերպման հետ (նա պոկում է տերմիններ մտրակով):

Այս խմբի մեջ կարող են դասվել $9_1^1, 9_2^2, 9_3^3$ շղթայիկով բերորոշվող հետևյալ կառույցները.

Շունը լցրել է սլարտեզը հաշոցով:

Գերդաստանը վայելում էր օրերը ուրախությամբ:

Ժամանակակից հայերենի գործիական հոլով կառույցների փոխակերպման նկարագրությունը սկսում ենք $9_1^1, 9_2^2$ կառույցից: Այս դեպքում հիմնական ուղադրությունը դարձնելով համադրությամբ, որոշ դեպքերում կանգրադառնա՝ նաև ներդասային փոխակերպումներին: Այսպես, օրինակ՝ $\Phi: 9_1 \rightarrow 9_2$ ՝ նա ճիացում է երգով $\rightarrow$ Երգը ճիացում է նրան:

Այս փոխակերպումը իրագործելու համար անհրաժեշտ են հետևյալ հրահանգները՝

1. Հիացում է բայաձևը դարձնել պատճառական կառուցվածքի:

2. Երգով-ը փոխակերպել՝ $\Phi: 9_1 \rightarrow 9_2$:

3. Նա-ն փոխակերպել՝ ճիացնել բայի ուղիղ խնդրի տեսքին բերելով՝ $\Phi: 9_2 \rightarrow 9_3$:

4. Նրան-ի և երգը-ի տեղերը համաչափորեն փոխել: Երգը ճիացում է նրան:

Ինչպես տեսնում ենք, հետևելով փոխակերպման ընթացքին, առաջին պահանջը տարածվում է միայն միջուկային կառույցի վերա, ավելի ճիշտ, այդ կառույցի բայի վրա: Զորորդ հրահանգը բառերի դասավորության առումով կարևոր լինելով, մեր փոխակերպման ընդհանուր նպատակների համար այնքան էլ էական չէ (եթե հաշվի չառնենք, իհարկե, նրա ոճական առանձնահատկությունը): Եթե ուղադիր հետևելու լինենք, ապա դժվար չէ նկատել, որ այդ հրահանգը ևս ֆակուլտատիվ է, քանի որ դրա չկատարումը նախադասության իմաստային կառուցվածքի խախտում չի առաջացնում: Երկրորդ և երրորդ հրահանգները առաջնակարգ նշանակություն ունեն մեր փոխակերպման համար:

Հայերենի գործիական հոլովով առաջին աստիճանի վերը նշված կառույցների համար մի շարք հետաքրքիր փոխակերպումներ կան, որոնց կուզեինք այժմ անդրադառնալ:

Նախ և առաջ նշենք, որ այդ կառույցների համար $\Phi : \Psi \rightarrow \Psi^+$ կապ փոխակերպումը դրեթե հնարավոր չէ ընչին բացառությամբ, այն է Ψ^+ հանդերձ: Այս փոխակերպումը խիստ սահմանափակ է, կապված է հանդերձ կապի խնդրառության հետ: Այսպես՝ $\Psi^1 \neq \Psi^2$ կառույցի համար ընտրած մեր ավելի քան 300 օրինակից վերը նըշված փոխակերպմանը ենթարկվեց մոտ 25 կառույց: Այդ կառույցներում հանդերձ-ի հավելումը իր հետ բերում է ինչպես միջուկային կառույցի, այնպես էլ ողջ առաջին աստիճանի կառույցի զգալի փոփոխություններ:

Հայերենի համար շատ բնականոն է ընթանում մեր կողմից հետազոտվող կառույցի Ψ -ն որևէ լրացումով հարստացնելը: Այս դեպքում կառույցները կարելի է բաժանել խմբերի ըստ այն բանի, թե ինչպիսի լրացումներ կարող է ստանալ Ψ -ն, այսինքն, թե լրացումը որ դասին պատկանող բառ է: Այստեղ ամենից մեծ հնարավորություն ունի ածականը: Ψ -երի մեծ մասը ստանում է ածական լրացում և ստանում ենք $\Phi : \Psi \rightarrow \Psi^+$: որը մեր կառույցների երկրորդ աստիճանի փոխակերպման ամենատարածված տեսակն է: Բերենք մի քանի օրինակ՝ Վիրաբույժը փաթաթում է խնամքով → Վիրաբույժը փաթաթում է մեծ խնամքով: Տղան ֆայյում է փողոցով → Տղան ֆայյում է լայն փողոցով: Ագիտատորը անցավ ձորով → Ագիտատորը անցավ մութ ձորով: Ես իջնում էի սանդղղով → Ես իջնում էի փայտե սանդղղով և այլն:

Բավականին տարածված է նաև առաջին կարգի փոխակերպման գործիականով լրացումը որևէ դերանունով լրացնելը:

Այստեղ արդեն, կարծես, գործում է զուտ ձևական չափանիշը⁷, երբ մեր ունեցած ավելի քան 300 առաջին աստիճանի փոխակերպների գործիականով լրացման վերջավորությունը նայելով կարելի է ասել, թե դրանցից որը կարող է ստանալ դերանուն-լրացում և որը՝ ոչ: Այդ սահմաններում (300 կառույց) հետազոտությունները մեզ հանգեցրին այն եզրակացության, որ դերանունով արտահայտված լրացում կարող են ստանալ գլխավորապես -ով վերջավորությամբ գործիականները: Դերանուն-լրացում ստացող կառույցները ընտրելիս որևէ կառույց չի առանձնանում, որի գործիականով լրացումը -մբ վերջավորություն ունենա: Այսպես՝ Նա սիրում է հեշտությամբ —* Նա սիրում է (իմ, քո, նրա...) հեշտությամբ: Նրանք մտնում են

7 Ձևական չափանիշ ասելով չենք ուզում անտեսել այն փաստը, որ այստեղ կարող են գործել նաև ոչ-ձևական չափանիշներ՝ իմաստային առանձնահատկություններ, իմաստային դաշտեր և այլն:

դժկամությամբ → * նրանք մտնում են (մեր, ձեր, նրանց...) դժկամությամբ: Այս նմանողությանը նույն փոխակերպմանը չեն կարող ենթարկվել՝ Աշխարհը լի են շնորհակալությամբ: Նա պատասխանել է փաղցրությամբ: Աղջիկը սպասում էր անհամբերությամբ: Զորակալներ հարցրեց հանգստությամբ և այլն:

Մինչդեռ $\Phi^1 \Phi^2 + (-\text{ով})$ կառույցները բավականին հեշտությանը ենթարկվում են $\Phi^1 \Phi^2 \rightarrow \Phi^1 \Phi^2$ փոխակերպմանը. նա հիանում եմ երգով → նա հիանում եմ (իմ, քո նրա...) երգով: Դուրը անցավ մարմնով → Դուրը անցավ (իմ, քո, նրա...) մարմնով: Արքայորդին հեռացավ գործերով → Արքայորդին հեռացավ իր գործերով:

Դհարկե, այստեղ չի կարելի հարցր այնպես պատկերացնել, թե բոլոր -ով-ով կառույցները կարող են ենթարկվել վերոբերյալ փոխակերպմանը՝ նա խոսում է ժամերով → * նա խոսում է (իմ, քո, մեր...) ժամերով: Կանայք ուտում են ախորժակով: * Կանայք ուտում են (իմ, քո, նրա...) ախորժակով: Գուցե դա դաշիս է նրանից, որ ժամերով և ախորժակով ձեռքը տվյալ կառույցներում գրեթե անփոփոխ պարադոքսական կիրառություն ունեն:

Հարկ ենք համարում նշել, որ այն կառույցները (թե ու-ով և թե -մը-ով), որոնք չեն ենթարկվում վերոբերյալ փոխակերպմանը, ուճական որոշակի նպատակներով կարող են ստանալ դերանուն լրացում: Այսպես, օրինակ, եթե վերցնենք վիրաբույժը փաթաթում է խնամքով կառույցը, ապա սովորական իմաստով սա որևէ դերանուն-լրացում ստանալ չի կարող, բայց երբ անհրաժեշտ է ընդգծել առկա վիրաբույժի այնպիսի խնամքը, որ հատուկ է միայն իրեն, ապա կարելի է՝ վիրաբույժը փաթաթում էր խնամքով, կամ՝ Աղջիկը բողոքեց եռանդով → * Աղջիկը բողոքեց իր եռանդով (իրեն հատուկ) և այլն:

Մյուս հետաքրքիր օրինաչափությունը, որ նկատվում է գործիականով առաջին աստիճանի փոխակերպման ժամանակ, առաջ է գալիս ունեցած կառույցները մի այլ գործիականով լրացնելիս: Այս նոր լրացումը անմիջական կախման մեջ է արդեն եղած գործիականից: Եթե առաջինը ունի -ով վերջավորություն, ապա երկրորդը կարող է լինել հիմնականում -մը վերջավորությամբ, և ընդհանրապես, եթե առաջինը -մը-ով է, ապա երկրորդը կարող է լինել հիմնականում -ով վերջավորությամբ: Բերենք մի քանի օրինակ $\Phi^1 \Phi^2 \rightarrow \Phi^1 \Phi^2 \Phi^2$ փոխակերպման՝ Արքայորդին հեռացավ գործերով → Արքայորդին դժվարությամբ հեռացավ գործերով: Աղջիկը սրբեց թաշկինակով → Աղջիկը դժկամությամբ սրբեց թաշկինակով: Նա

գնում է գիշերով → Նա ուրախությամբ է գնում գիշերով: Նրանք մըա-
նում էին դժկամությամբ → Նրանք դնում մտնում էին դժկամու-
թյամբ: Դու անցնում ես վնդոցով → Դու փաղոցով անցնում ես ա-
րագությանը և այլն:

Նկատված օրինաչափությունը չի տարածվում անորոշ դերբայի
գործիական հոլովածների վրա: Այսպես՝

Աղջիկը դողալով սրբեց թաշկինակով և այլն:

Նկատելի է, որ եթե երկու տարբեր վերջավորությամբ գործիա-
կանների շարահարաբայությունը համեմատաբար ազատ է, այսինքն՝ դը-
րանք կարող են լինել հաջորդել միմյանց և թե՛ միջնորդավորված լի-
նել բայով, ապա այս երկրորդ դեպքում երկու գործիականներ (ե-
զաժը և դերբայի գործիական հոլովածը) միմյանց անմիջապես
հաջորդել չեն կարող և պետք է անպայման միջնորդված լինել բա-
յով: Փոխակերպման այս աստիճանում Գ²-ն թվական-որոշիչ ըս-
տանալու շատ քիչ հնարավորություններ ունի: Այդ փոխակերպումը
ենթադրում է բավականին արմատական սահմանափակումներ:
Նախ՝ ամբողջապես բացառվում է մի-ով գործիականը թվական-ու-
րոշիչով լրացնելու հնարավորությունը, երկրորդ՝ -ով-ով գործիա-
կաններից թվական-որոշիչ կարող են ստանալ միայն, այսպես կոչ-
ված, միջոցի գործիականները, երբ խիստ ակնառու է գործողության
հետ անմիջապես առնչվող ինչ-որ առարկայի, գործիքի առկայու-
թյունը: Հստ որում, այս դեպքում թվական-որոշիչը պահանջում է,
որ գործիականով լրացյալը անպայման դրված լինի եզակի թվով:
Օրինակ՝ Նրանք ուտում էին մատենեով → Նրանք ուտում էին տասը
մատով: Նա ամրացրեց կողպեքով → Նա ամրացրեց երկու կողպե-
քով: Անժիկը սրբեց թաշկինակով → Անժիկը սրբեց երկու թաշկինա-
կով և այլն:

Այսպիսով, խոսվեց գործիականով առաջին աստիճանի կա-
ռույցների փոխակերպման միայն մի քանի դեպքի մասին, որոնք,
սակայն, բավական են ցույց տալու, որ փոխակերպական քերական-
ությունը, առանձնապես նրա համադրության բաժինը, ժամանա-
կակից հայերենի շարահյուսական իրողություններն ուսումնասիրե-
լիս կարող է հանգեցնել ուշագրավ արդյունքների:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ակսել Բակունց

ՍԽ—Սերո Խանզադյան

ԳԲ—Գրիգոր Բալասանյան

ՍԶ Ստեփան Զորյան

ԳՄ Գուրգեն Մահարի